ՏԱԹԵՎԻԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի հայցորդ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է կրթության որակի, արդյունավետության և մատչելիության աստիճանի բարձրացման միջոցով: Կրթությունը կարևորվում է որպես պետական ռազմավարական հիմնախնդիրների՝ ազգային անվտանգության, կայուն տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման, ժողովրդավարական հասարակության զարգացման, գիտելիքահենք տնտեսության կայացման, լուծման առանցքային գործոն: Ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացման հարցը շարունակում է դիտարկվել որպես բուհերի ֆինանսական կառավարման կարևորագույն հիմնախնդիր, որի արդի գերակայություններին է նվիրված սույն հոդվածը:

Հիմնաբառեր. *ֆինանսական հոսքեր, ֆինանսական վերահսկողություն, բյուջետավորում, ճկուն նախահաշիվ, կրթական ծառայություններ*
JEL: F21, F3, G38

Կրթական ծառայությունների մատուցումը ուղեկցվում է ֆինանսական հոսքերով, որոնք խստագույն վերահսկողություն են պահանջում: Ֆինանսական հոսքերի վերահսկողությունը առաջին հերթին ենթադրում է կրթական ծառայությունների համակարգի յուրաքանչյուր օղակի գործունեության նախահաշվի կազմում, որով ձևավորվում է բուհի գործունեության առաջիկա

տարվա գլխավոր նախահաշիվը: Նախահաշվային վերահսկողության համակարգը բաղկացած է երկու հիմնական տարրերից՝ բյուջետավորումից և վերահսկողությունից[1]:

Բյուջետավորումն ընդգրկում է տարբեր նախահաշիվների կազմման գործընթացը: Բուհական գործունեության տարբեր օղակները պետք է ընդգրկվեն նախահաշվային աշխատանքներում՝ ըստ իրենց պատասխանատվության ոլորտների: Միջին և խոշոր ոլորտներում այդ գործընթացը կարող է բավական ժամանակ պահանջել, քանի որ կրթական ծառայությունների տարբեր բնագավառների նախահաշիվների համակարգման անհրաժեշտություն կառաջանա դրանց լիարժեքության և կազմակերպության որդեգրած քաղաքականության ու նպատակների համապատասխանության մեջ համոզվելու համար:

Վերահսկողությունը համապատասխան ժամանակահատվածի նախահաշվային ստանդարտների ու փաստացի արդյունքների համադրումն է[2]: Նախահաշիվներից փաստացի արդյունքների յուրաքանչյուր էական շեղում պետք է ներկայացվի կառավարման տվյալ օղակին՝ անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման համար:

Նախահաշվային կենտրոնները որոշելիս կարևորվում է դրանց ներկայացումն ըստ կառավարման պատասխանատվության կենտրոնների: Կառավարման օղակների պատասխանատուներն ընդգրկվում են իրենց գործունեությանն առնչվող նախահաշիվների կազմման փուլում, այնուհետև լիարժեք տիրապետում են դրանց իրականացմանը վերաբերող վերահսկողության տեղեկատվությանը:

Բուհերում նորմատիվային վերահսկողության համակարգի գործունեությունը պահանջում է.

- բուհի երկարաժամկետ ռազմավարական նպատակների որոշում,
- կանխատեսումների հաշվարկի համար տվյալների բավարար բազայի ստեղծում,
- նախահաշվային կենտրոնների տրամաբանական ստորաբաժանում, ըստ որի յուրաքանչյուր կառավարչին կցվում է նախահաշիվ, վերահսկողության ոլորտ և տեղեկատվություն:

Բուհի գործունեության գլխավոր նախահաշիվը ձևավորվում է համաբուհական և ֆակուլտետային ծախսային կենտրոնների նախահաշիվներից: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրին կցվում է նախահաշվի կատարման պատասխանատու[3]:

Շատ կարևոր է ֆակուլտետային և համաբուհական ծախսային կենտրոնների նախահաշիվների ներդաշնակ կազմումը, որով կանխվում են ծախսերի ուռճացված նորմավորումները և, ինչու չէ՝ նաև թերագնահատված բուհական գործունեության հոդվածների ներկայացումը, որով վտանգվում է մատուցվող կրթական ծառայությունների որակը: Այդ իսկ պատճառով ֆինանսական հոսքերը նորմավորելիս կատարվում է նախահաշվային կենտրոնների փոխկապակցում, երբ գլխավոր նախահաշվի կազմում ինտեգրվում են կրթական ծառայությունների տարբեր բաժիններ:

---

[1] Տե՛ս **Глухов В., Бахрамов Ю.,** Финансовый менеджмент. Учебник для вузов. М., 2010, էջ 128:

[2] Տե՛ս Մենեջմենթ /Յու.Մ.Սուվարյանի ընդհ. խմբ./: Եր., «Տնտեսագետ», 2016:

[3] Տե՛ս **Павлова Л.,** Финансовый менеджмент. Учебник для вузов. М., “Юнити-Дана”, 2012, էջ 206:

Բուհական գործունեության բյուջետավորումն ունի մի շարք առանձնահատկություններ: Նախ՝ այստեղ տարբերակվում են ուսումնական և կրթության սպասարկման ծախսերը: Ընդ որում, եթե ծախսերի առաջին խումբը ուղղակի կապ ունի դասավանդվող ժամաքանակի, ուսանողների թվի փոփոխման հետ, ապա ծախսերի երկրորդ խմբի փոխկապակցումը ուսումնական ծառայությունների ուղղակի մատուցմանը կրում է անուղղակի բնույթ[4]:

Բացի այդ, բուհերում հիմնականում պետք է կիրառվեն ճկուն նախահաշիվներ, որոնք, կազմվելով և գործողության մեջ դրվելով ֆինանսական տարվա սկզբին, չեն կարող անփոփոխ մնալ ամբողջ տարվա ընթացքում:

Հիմնականում, ճկուն նախահաշիվների կազմումը պայմանավորված է ուսումնական և ֆինանսական տարիների մեկնարկի ու ավարտի ժամանակային տարբերություններով: Այսպես՝ կրթական ծառայությունների մատուցման պատվերը կատարվում է տարին մեկ անգամ՝ առաջին կուրսեցիների ընդունելությամբ, որոնց թիվը ճշգրիտ կանխատեսելի չէ ֆինանսական տարվա սկզբին և, փաստորեն, հստակեցվում է ուսումնական տարվա մեկնարկին: Դեռ ավելին, ուսումնական տարվա ավարտին արձանագրվում է մի շարք պատճառներով ազատված ուսանողների քանակ, ըստ որի ճշտվում է հաջորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախահաշիվը: Ուստի, ֆինանսական տարվա սկզբին հաստատված ուսանողների թվային շեղումները առաջացնում են բուհական գործունեության ճկուն նախահաշիվների կազմման պահանջ:

Ճկուն նախահաշիվների կիրառումը նպաստում է սահմանված նորմաներից կրթական ծառայությունների փաստացի ծախսերի շեղումների արժանահավատ վերլուծությանը և բուհերում ֆինանսական արդյունքների նորմատիվային հաշվառման արդյունավետ կազմակերպմանը:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ֆինանսական հոսքերի կառավարումը չի սահմանափակվում միայն նախահաշվային վերահսկողությամբ, այլ լրացվում է նաև կրթօջախի ֆինանսական իրավիճակի գնահատմամբ: Եթե նախահաշվային վերահսկողության հիմնական նպատակը ծախսային և եկամտային հոսքերի կառավարումն է, ապա ֆինանսական դրության գնահատման նպատակը բուհի ակտիվների և պարտավորությունների կառավարումն է:

Բուհը տնտեսավարող սուբյեկտ է և, բնականաբար, իր տնօրինած ակտիվների մի մասը պետք է լրացնի ստանձնած պարտավորությունների հաշվին (վարկային փոխառություններ, լիզինգ, մատակարարներ, պարտավորություններ բյուջեին և այլն): Ուստի բուհի ֆինանսական իրավիճակը բարվոք է համարվում, եթե իր ակտիվներով հնարավորություն է ունենում փոխհատուցելու ստանձնած պարտավորությունները: Հակառակ դեպքում արձանագրվում է ֆինանսական լարված իրավիճակ, որի երկարատևության դեպքում բուհին սպառնում է սնանկացում:

Հաշվապահական հաշվեկշռով բուհերի ֆինանսական իրավիճակի գնահատումն իրականացվում է մի շարք ցուցանիշներով, որոնցից կարևորվում է հաշվեկշռի իրացվելիությունը, երբ հակակշռվում են ակտիվների ու պասիվների խմբային որոշակի մնացորդների արժեքները, և, դրանով իսկ, որոշվում բուհի հնարավորությունները տնօրինած միջոցներով ստանձնած պարտա-

---

[4] Տե՛ս **Ван Хорн Дж. К.,** Основы управления финансами, пер. с англ./ гл. ред. серии Л.В. Соколов. М.: “Финансы и статистика”, 2006, էջ 385:

վորությունները փոխհատուցելիս և սեփական կապիտալի առկայությունը հիմնավորելիս[5]:

Կրթական ծառայությունների մատուցման ընթացքում հատկապես կարևորվում է կառավարչական որոշումների ժամանակին կատարումը, որով բուհական գործունեության ֆինանսական հոսքերի թերություններն օպերատիվ բացահայտվում և հրատապ շտկվում են: Ֆինանսական հոսքերի վերահսկողության խնդիրները լուծվում են նորմատիվային հաշվառման կազմակերպմամբ, և կառավարման համակարգում հաշվապահական տեղեկատվական հոսքը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.



Գծապատկեր 1. *Հաշվապահական տեղեկատվական հոսքի ալգորիթմը*

Նորմատիվային հաշվառման կազմակերպման ժամանակ նախօրոք կազմվում են ֆինանսական գործունեության արդյունքների նորմաներ, որոնք ապահովում են առավելագույն կրթական արդյունավետություն: Հետևաբար՝ բուհերը ձգտում են ստանալ հաշվարկված նորմաներին համապատասխան փաստացի արդյունքներ, իսկ սահմանված նորմաներից շեղումները վկայում են տնտեսավարման թերացումների և դրանց հրատապ շտկման անհրաժեշտության մասին:

Ըստ այդմ՝ տնտեսական որոշումներ կայացնող օղակների համար չափազանց կարևորվում է տնտեսավարման փաստացի արդյունքների հոսքի վերլուծությունը.

Փաստացի հոսք = Նորմատիվային հոսք (+) (-) Շեղումներ

Նորմատիվային հաշվառում կազմակերպելիս անհրաժեշտություն է առաջանում ապահովելու հետևյալ պայմանները.

- ստեղծել տնտեսավարման ցուցանիշների նորմատիվային բազա, որը պետք է ընդգրկի կրթական ծախսերի և կրթական ծառայությունների իրացման ողջ գործընթացը,
- ապահովել նորմաներից շեղումների արձանագրման փաստաթղթաշրջանառություն,
- կիրառել լրացուցիչ հաշվապահական հաշիվներ, որոնք տարանջատված կամփոփեն կրթական ծառայությունների ֆինանսական արդյունքների նորմատիվային և նորմաներից ծագած շեղումների հոսքերը,
- կիրառել այնպիսի հաշվային թղթակցություններ, որոնք թույլ կտան հաշվապահական համակարգի շրջանակներում փոխկապակցել նորմատիվային շեղումների և փաստացի տեղեկատվական հոսքերը,

[5] Տես **Шеремет А.Д., Сайфулин Р.,** Финансы предприятий. М., “ИНФРА-М”, 2017, էջ 188:

- հնարավորություն ստեղծել փաստացի հոսքերը զուգահեռաբար ներկայացնելու ըստ՝ «նորմատիվային հոսք + - շեղումներ»[6]:

Այսպիսով՝ բուհի ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով խիստ կարևորվում է ֆինանսական հոսքերի ճիշտ հաշվառումը, նորմավորումը, ուղղորդումը և կառավարումը, ինչի ոչ ճշգրիտ իրականացումը կարող է վտանգել բուհի կողմից մատուցվող կրթական ծառայության որակը:

Բարեփոխումների ներկայիս ալիքը չէր կարող շրջանցել բուհական ֆինանսական կառավարման հիմնախնդիրները: Բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման բարեփոխումների հիմնական բաղադրիչներն են.

- անցումը պետպատվերից ուսումնական նպաստների համակարգին,
- պետական կրթաթոշակների ներդրումը,
- ուսանողական վարկերի համակարգի հիմնումը,
- բուհի համախմբված բյուջեի կազմումը և հաստատումը խորհրդի կողմից, անցումը միջնաժամկետ ֆինանսական ծրագրավորման,
- հաշվապահական հաշվառման նոր չափորոշիչների ներդնումը[7]:

Ներկայումս բարձրագույն մասնագիտական կրթությունն ապահովվում է և՛ պետական, և՛ մասնավոր բուհերում վճարովի ու անվճար հիմունքներով: Սակայն «անվճար կրթություն» հասկացությունը չպետք է ընմբռնել ուղղակիորեն: Կրթությունը ծառայություն է, որը, ինչպես և բոլոր մատուցվող ծառայությունները, պահանջում է փոխհատուցում: Այս պարագայում, սակայն, վճարող սուբյեկտը ոչ թե ուսանողն է, այլ պետությունը, որևէ կազմակերպություն կամ էլ հենց բուհը: Պետությունը, ֆինանսավորելով կրթությունը, ապահովում է ՀՀ քաղաքացիների մրցութային կարգով բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը:

ՀՀ Կառավարության 2018–2020 թթ. կարճաժամկետ ծախսերի ծրագրով ՀՆԱ-ից կրթությանը հատկացվող ֆինանսավորումը 2017-2020 թթ. տարեցտարի նվազեցվելու է՝ 2.34%-ից մինչև 1.85%-ի: Կրթության ոլորտի ծախսերը համախմբված բյուջեի մեջ 2017-ին կազմել են 9.4%, իսկ վերջին 10 տարիների ընթացքում դրանք տատանվել են 9,3–10,8%-ի միջակայքում:

Ստորև ներկայացվում է 2010–2017 թթ. կրթությանն ուղղվող պետական ծախսերի բաժինն ընդհանուր պետական ծախսերում:

Վճարովի կրթության համակարգը Հայաստանում սկզբնավորվել է անկախությունից հետո: 1989 թ. Հայաստանում կրթության վրա կատարվող ծախսերը կազմում էին ՀՆԱ 6.9%-ը, մինչդեռ 2004-ին՝ 3.42%-ը, իսկ 2017 թ.՝ 2.34%-ը:

Կրթությունը Հայաստանում հիմնականում ֆինանսավորվում էր պետական բյուջեից: Այսպես՝ 2017 թ. կրթության վրա կատարված ծախսերը կազմել են բյուջեի ընդհանուր ծախսերի 9.4%-ը (252,780,438.8 հազար դրամ), ինչը կրկնակի զիջում է միջազգային չափորոշիչներին:

Ներկայումս վճարովի ուսուցումը ապահովում է բարձրագույն կրթության ֆինանսավորման գերակշիռ մասը (ավելի քան 83%-ը), և, ամենայն հավանականությամբ, այս իրավիճակը կպահպանվի նաև ապագայում:

---

[6] Տե՛ս **Ковалев В.В.**, Финансовый анализ: управление капиталом. Выбор инвестиций. Анализ отчетности. М., “Финансы и статистика”, 2010, էջ 406:

[7] Տե՛ս **Тренев Н.И.,** Управление финансами. Учебное пособие. М., “Финансы и статистика”, 2015, էջ 185:



* **Աղբյուրը՝** http://www.gov.am/am/budget/

Գծապատկեր 2. *ՀՀ-ում կրթությանն ուղղվող պետական ծախսերի բաժինն ընդհանուր պետական ծախսերում 2010–2017 թթ.**

Աղյուսակ 1

*2011–2017 թթ. ՀՀ բուհերում ուսանողների ընդհանուր թիվը**

Տարեթիվը	Ընդունվել են	Ուսանողների ընդհանուր թիվը
2011	6119	75416
2012	17920	74726
2013	15978	71559
2014	14979	68178
2015	15487	70931
2016	15022	69322
2017	17649	81648

* **Աղբյուրը՝** ՀՀ սոցիալական վիճակը 2011–2017 թթ., վիճակագրական տեղեկատու՝ http://www.armstat.am/am/?nid=82&id=1801

Կրթությունը, լինելով պետական և հասարակական կյանքի կարևորագույն ոլորտ, մշտապես պետության ուշադրության կենտրոնում է: Սակայն բարձրագույն կրթությունը, որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն երաշխիք, դեռևս անհրաժեշտ չափով հասու չէ ազգաբնակչության լայն զանգվածներին: Հասարակության մեջ հիշողությունները խորհրդային ուսուցման անվճար համակարգի մասին այդպես էլ հիշողություն կմնան: Մի կողմից՝ սոցիալապես համահարթեցված հասարակարգը, մյուս կողմից՝ պետության՝ հասարակությանն առաջարկած անվճար ուսուցումը ոչ վաղ անցյալում ընդունելի պայմաններ էին ստեղծում կրթություն ստանալու համար: Սակայն խորհրդային տարիներին բարձրագույն կրթության համակարգը կատարյալ պայմաններ չէր ստեղծում հասարակության բոլոր անդամների համար, և, թերևս, այդ տարիներին էլ սահմանափակ տեղերի և մրցութային լարվածության պատճառով հասարակության մի ստվար հատված կրկին զրկվում էր ուսանելու հնարավորությունից:

Բարձրագույն կրթության ֆինանսական առաջնահերթ հիմնախնդիրներից է սոցիալապես անապահով խավի՝ այս ծառայությունից օգտվելու հնարավորության ապահովումը:

Ներկայումս արտասահմանյան շատ երկրներում բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն ունեն հիմնականում վճարունակ խավերը, որոնք ի վիճակի են փոխհատուցելու դիմորդի նախա-

պատրաստման ընթացքում նրանց հետ պարապողների, իսկ հետագայում նաև ուսանողի բուհական ուսուցման վարձերը: Ընդ որում, անվճարունակ խավերը հիմնականում չեն հաղթահարում ընդունելության քննությունների բարդ առաջադրանքները հենց այն պատճառով, որ դպրոցը դիմորդին լիարժեք չի նախապատրաստում ընդունելության քննություններին. այդ առաքելությունը փոխանցված է խոշոր վարձավճարներ պահանջող և մայրաքաղաքում գործող «ռեպետիտորների» ինստիտուտին: Արդյունքում՝ բուհերում հետզհետե կրճատվում է գյուղական շրջաններից ուսանողների տեսակարար կշիռը:

Բացի այդ, ֆինանսական լարվածությունն էլ ավելի է մեծանում ուսանողի բուհ ընդունվելուց հետո: Ներկայումս մեկ ուսանողի օրական ծախսը (ներառյալ՝ կրթավճարները, ճանապարհածախսը, սնվելը, զանազան ուսումնական նյութերի ու պարագաների ձեռքբերումը), միջին հաշվով, հանրապետությունում կազմում է 3000-4000 դրամ: Ֆինանսական իրավիճակն էլ ավելի է լարվում, երբ ընտանիքում մեկից ավելի ուսանող է լինում:

Կրթական ծառայությունների մատուցումը թանկ հաճույք է. դա անհրաժեշտ է հիմնավոր ֆինանսավորել, այդ իսկ պատճառով, ինչպես արդեն նշվել է, կրթության համար միշտ էլ վճարվել է կամ պետության, կամ անհատի կողմից: Ուստի վճարովի կրթությունը արդարացված է՝ մանավանդ տնտեսապես զարգացող երկրներում, որտեղ պետությունը անգամ լիարժեք չի կարողանում լուծել քաղաքացիների կրթությունից առաջնային համարվող սոցիալական մյուս պահանջմունքները: Այս պարագայում վիճահարույց պետք է համարվի ոչ թե վճարովի կրթության փաստը, այլ մատուցվող ծառայությունների որակի և դրանց դիմաց կատարվող կրթավճարների հիմնավորվածությունը:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս՝ որքան բարձր են կրթավճարները, այնքան որակով են մատուցվող կրթական ծառայությունները[8]: Սակայն մեր երկրում պետությունը իր միջոցներով դեռևս չի կարողանում նորմալ ապահովել անգամ պետական բուհերի գործունեությունը. կրթական գործընթացի անխափանությունը հիմնականում երաշխավորվում է կրթավճարներով: Բարձրագույն կրթական հաստատությունները համարվում են շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություններ և, հետևելով ՀՀ բուհերի զարգացման դանդաղ տեմպերին, թվում է, ներկայիս կրթավճարների պայմաններում բուհը դժվարությամբ է կարողանում հոգալ նույնիսկ նվազագույն ծախսերը: Այս առումով, համաձայն չենք տարածված այս տեսակետին և կարծում ենք, որ ֆինանսական միջոցները պարզապես ճիշտ ուղղությամբ չեն հոսում, և առկա է ֆինանսական հոսքերի ճիշտ կառավարման խնդիր:

Ներկայիս գործող համակարգում դեռևս լուծվում են կրթության որակի վերահսկողության և գնահատման հիմնահարցերը: Բացի այդ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նույնպես դժվարությունների է հանդիպում բուհական գործունեության որակի արժանահավատ աուդիտի կազմակերպման գործում՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բուհերում, քանի որ դեռևս մշակված չէ կրթության որակի կառավարման համապարփակ հայեցակարգ:

---

[8] Տե՛ս **Балабанов И.Т.**, Анализ и планирование финансов хозяйственного субъекта. М., “Финансы и статистика”, 2016, էջ 96:

Հանրապետությունում, չնայած մեծ պահանջարկին, դեռևս մշակված չեն յուրաքանչյուր մասնագիտության թողարկման որակի գնահատման ցուցանիշները, որը և խոչընդոտում է բարձրագույն կրթության ծառայության հավաստի արժևորմանը և, դրան համապատասխան՝ ուսման վճարների սահմանմանը: Բացի այդ, բուհերում դեռևս անարդյունավետ է գործում կրթության որակի ներքին վերահսկողությունը՝ կապված կրթական չափորոշիչների ոչ լիարժեք կիրառման հետ:

Բուհական կրթությունում դեռևս ավելի շատ հաշվի են առնում խորհրդային կրթական համակարգի ավանդույթները, քան աշխատուժի շուկայի կողմից շրջանավարտին առաջադրվող արդիական պահանջները: Այսօր ուսանողին մատուցվող բուհական կրթական ծառայության որակը չպետք է միայն գնահատել դասախոսությունը սերտած ուսանողի բարձր գնահատականներով, հարկ է հաշվի առնել նաև մասնագիտական գիտելիքները, որոնք անվերապահորեն պահանջում է աշխատուժի շուկան: Ուրեմն՝ կրթության որակի բարելավման առաջնահերթ ուղին ուսումնական գործընթացի ծանրության կենտրոնի տեղափոխումն է խիստ ակադեմիացված ոլորտից դեպի գործնական ուղղվածության ոլորտ:

Կրթության որակի բարելավման նպատակով ուսանողներին հնարավորինս պետք է բեռնաթափել դասախոսություններից և լսարանային հոսքային պարապմունքներից: Մայրենի լեզվով և ժամանակի շնչով կազմված դասագրքերի, ուսումնական ձեռնարկների պակասը ստիպում է դասախոսությունը վերածել թելադրությունների, որոնք խիստ անարդյունավետ են դարձնում ուսման գործընթացը: Ավելին, ներկայումս ուսանողը հիմնականում զրկված է այլընտրանքային ուսումնական նյութեր ձեռք բերելու հնարավորությունից, քանի որ բուհերում մեծ մասամբ բացակայում են ինտերնետային լսարանները, գրադարանները համալրվում են շատ դանդաղ, որոշ դեպքերում՝ հնացած գրականությամբ:

Դասավանդման գույքային և տեխնիկական բազան բոլոր բուհերում բարելավման կարիք ունի: Հիմնականում լսարաններում բացակայում են նույնիսկ տարրական գույքային միավորները, ավելորդ է նշել տեսաուսուցողական նյութերի ցուցադրման, տեխնիկական հնարավորությունների, բազմացնող սարքերի բացակայության կամ սակավության մասին: Ըստ այդմ՝ նվազում է դասավանդման արդյունավետությունը՝ պայմանավորված նաև յուրաքանչյուր դասին առնչվող ուսուցողական աշխատաթերթերի, դասախոսության սեղմագրերի տրամադրման անկատարության հետ:

Կրթության որակը պատշաճ չի ապահովվում նաև ուսանողների արտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների անցկացման ընթացքում: Ուսանողին մատուցվող կրթական ծառայությունների ժամանակահատվածի մոտ 15%-ը բաժին է ընկնում ուսումնաարտադրական փորձառությանը: Խորհրդային տարիներին փորձառության անցկացման պակաս չկար. մտահոգիչ էր միայն ուսանողին գործնական ունակությունների մատուցման որակը: Ներկայումս դրան այլ հիմնախնդիրներ գումարվեցին՝ փորձառության անցկացման օբյեկտների սղություն, վերջիններիս կողմից ուսանողներին գործնական հմտությունների մատուցման դիմաց վարձավճարների պահանջ, ավելին՝ ուսանողների նկատմամբ անտարբեր վերաբերմունք: Ներկայումս բուհերը փորձում են ուսումնաարտադրական պրակտիկան գործատուների հետ անցկացնել վճարովի հիմունքներով,

սակայն այդ վճարներն այնքան խորհրդանշական են, որ պրակտիկայի անցկացման վայրերում ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերմանը հիմնականում պատշաճ ուշադրություն չի դարձվում:

Այս տեսանկյունից՝ որպես նորարարություն կարելի է դիտարկել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում 2017 թ. ստեղծված գիտաուսումնական 4 լաբորատորիաների ստեղծումը՝ «Ֆինանսական ներգրավվածություն», «Դրամավարկային քաղաքականություն և տնտեսական աճ», «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» և «Սոցիալական հետազոտություններ»:

Գիտաուսումնական լաբորատորիան, համաձայն 2014 թ. մարտի 26-ին ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից հաստատված «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ» կանոնակարգի, ակադեմիական տարատեսակ հետազոտություններով զբաղվող պրոֆեսորադասախոսական կազմից, գիտաշխատողներից, ասպիրանտներից, ուսանողներից կազմված խումբ է, որի ստեղծման հիմքը կոլեկտիվ նախագծերի իրականացման համար համապատասխան միջավայրի ստեղծումն է տվյալ ֆակուլտետի ներսում[13]: Գիտաուսումնական լաբորատորիաները կառուցվում են հորիզոնական համագործակցության սկզբունքով, դառնում են ակադեմիական միջավայրի աճի հիմքը՝ իրենց վրա վերցնելով ուսանողների փորձառության կազմակերպման և դրա արդյունավետության մակարդակի բարձրացման առաքելությունը: Սա, թերևս, նորարարություն է ՀՀ բարձրագույն կրթության համակարգում:

Մեկ այլ հիմնախնդիր է կրթավճարների հիմնավորվածությունը: Դրանց սահմանման համակարգը հանրապետությունում դեռևս կարգավորված չէ: Այսօր ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ կրթավճարներն ավելի բուհերի գոյատևման ապահովման, քան կրթական լուրջ ծրագրերի իրականացման նպատակ ունեն: Հետևապես՝ ուսման վարձերը առավելապես ծառայում են բուհի և ոչ թե ուսանողների շահերին: Տարբեր բուհերում կրթավճարները բավական տարբերվում են (երբեմն 1.5–2 անգամ), որը հիմնականում պայմանավորված է ոչ թե մատուցվող ծառայության որակով և աշխատանքի շուկայում բուհական շրջանավարտների պահանջարկով, այլ պարզապես ազգաբնակչության շրջանում մասնագիտության նկատմամբ ձևավորված անցյալի «ավանդական վարկանիշներով»:

Դժվարությամբ հայթայթվող կրթավճարների գործող պրակտիկան ուսանողի համար խիստ ռիսկային է, քանի որ մեր օրերում հնարավոր չէ գնահատել ուսման վարձի հիմնավորվածությունն ըստ մատուցվող կրթության ծառայության որակի:

Հետևաբար՝ կրթական ոլորտում հրատապ է համարվում.

- աշխատուժի շուկայի պահանջներին համապատասխան բարձրագույն կրթությամբ մասնագետների որակի իրատեսական գնահատումը,
- կրթական ծառայությունների մատուցման արժեքի հիմնավորման մեթոդաբանության մշակումը:

Բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման իրատեսական արժևորումը հնարավորություն կտա մի կողմից՝ հիմնավորված սահմա-

[13] Տե՛ս http://asue.am/en/media/news-143/asue-scientific-educational-laboratories-started-to-work-3264

նելու ուսման վարձերը, մյուս կողմից՝ շրջանավարտներին կկողմնորոշի «կրթավճար-կրթության որակ-աշխատատեղ» շղթայում ճիշտ դիրքորոշվելու և կրթության ոլորտ (բուհ) ընտրելու հարցում:

Հանրապետությունում վերջին տարիներին արձանագրվող տնտեսական աճի չափավոր տեմպերը առաջիկայում կընդլայնեն որակավորված աշխատուժի շուկան և արդիական ու խստագույն պահանջներ առաջադրելով բարձրագույն կրթությամբ մասնագետին՝ կբարձրացնեն վերջինիս վարձատրության չափերը: Ուրեմն, արդեն ժամանակն է լրջորեն մտահոգվելու կրթական ծառայությունների որակի բարելավման և այդ նպատակով միջոցներ հայթայթելու հարցերով:

Որակյալ կրթության դիմաց հիմնավոր կրթավճարներ հնարավոր կլինի սահմանել հանրապետությունում ուսանողական վարկային գծերի ձևավորման մեխանիզմի ակտիվացման պարագայում, երբ կրթավճարների բեռը ուսման տարիների ընթացքում կընկնի առևտրային բանկերի վրա, իսկ հետագայում կփոխհատուցվի շրջանավարտի կողմից: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, պետությունը բանկերին արտոնյալ պայմաններ է առաջարկում այնպես, որ ուսանողական վարկերը լինեն բոլորին հասանելի՝ ցածր տոկոսադրույքներով և իրագործելի գրավադրմամբ: Կրթական վարկերը, որպես կանոն, թեթևացվում են հարկային բեռից և մասամբ ապահովագրվում պետության կողմից, որը բանկերում էապես նվազեցնում է վարկերի տրամադրման ռիսկայնությունը: Չէ՞ որ պետության համար որակյալ կրթությունը արդյունավետ գործիք է մարդկային կապիտալի ձևավորման և ազգային անվտանգության ապահովման առումներով: Վարկային ռեսուրսների հաշվին կրթավճարների փոխհատուցումը կլուծի մի շարք խնդիրներ.

- բուհն ավարտելուց հետո շրջանավարտը չի մտածի հանրապետությունը լքելու մասին և կփորձի աշխատանք գտնել հայրենիքում,
- կրթությունը հասանելի կդառնա նաև անապահով խավերի համար, որոնք ֆինանսական ռեսուրսներ չունենալու պատճառով ներկայումս զրկված են բուհում սովորելու հնարավորությունից,
- մուծվող կրթավճարները կնպաստեն ուսումնառության արդյունավետության բարձրացմանը, այլ ոչ թե հիմնականում կծառայեն կրթօջախի «գոյատևմանը»:

Օգտագործված գրականություն

1. Մենեջմենթ / Յու.Մ. Սուվարյանի ընդհ. խմբ./: Եր., «Տնտեսագետ», 2016:
2. Балабанов И.Т., Анализ и планирование финансов хозяйственного субъекта. М., “Финансы и статистика”, 2016.
3. Тренев Н.И., Управление финансами. Учебное пособие. М., “Финансы и статистика”, 2015.
4. Ковалев В.В., Финансовый анализ: Управление капиталом. Выбор инвестиций. Анализ отчетности. М., “Финансы и статистика”, 2010.
5. Шеремет А., Сайфулин Р., Финансы предприятий. М., “ИНФРА-М”, 2017.
6. Ван Хорн Дж. К., Основы управления финансами, пер. с англ. /гл. ред. серии Л.В. Соколов/. М., “Финансы и статистика”, 2006.
7. Павлова Л., Финансовый менеджмент. Учебник для вузов. М., “Юнити-Дана”, 2012.
8. Глухов В., Бахрамов Ю., Финансовый менеджмент. Учебник для вузов. М., 2010.

ТАТЕВИК САМСОНЯН
Соискатель кафедры маркетинга АГЭУ

Основные приоритеты управления финансовыми потоками в системе высшего образования РА. – Сфера образования в Армении является одной из предпосылок стабильного развития страны, а также сохранения и воспроизводства человеческого капитала. Основным приоритетом политики обеспечения человеческого развития является развитие прогрессирующего образования, обеспечение качества образования посредством повышения эффективности и доступности. Важность образования в качестве государственной стратегической задачи рассматривается как основной фактор решения задач национальной безопасности, стабильного экономического развития, преодоления бедности, развития демократического общества, научнообоснованной экономики. Задача повышения эффективности управления финансовыми потоками продолжает оставаться одной из ключевых проблем финансового управления вузами, актуальности которой и посвящена данная статья.

Ключевые слова: *финансовые потоки, финансовый контроль, бюджетирование, гибкая смета, образовательные услуги.*
JEL: F21, F3, G38

TATEVIK SAMSONYAN
Researcher at the Chair of Marketing at ASUE

The Main Priorities of the Management of Financial Flows in the Higher Education System of the RA. – The sphere of education in Armenia is one of the prerequisites for a stable development of the country, as well as the preservation and reproduction of human capital. The main priority of the human development policy is the development of progressive education, ensuring the quality of education through increased efficiency and accessibility. The importance of education lies in the solution of state strategic tasks as one of the important factors in the development of a scientifically sound economy, stable economic development, overcoming poverty, and national security. The task of improving the management of financial flows continues to be one of the key problems of financial management of universities, the relevance of which is the subject matter of this article.

Key words: *financial flows, financial control, budgeting, flexible estimates, educational services.*
JEL: F21, F3, G38